

Արձանագրություն Հանրային Ցայտադրյուր Խաղահրապարակների Վերաբացման Վերաբերյալ

Վերջին թարմացումներ.

6/29/20. Տրամադրվում են լրացուցիչ մանրամասներ բռնկման մասին Հանրային Առողջապահության Վարչությանը հաղորդելու վերաբերյալ:

7/08/20. Ավելացվել են մանրամասներ աշխատակիցների արձակուրդային նպաստների վերաբերյալ:

7/17/20. Տրամադրվում է լրացուցիչ տեղեկատվություն աշխատակիցների և այցելուների դիմակների և ախտանիշների ստուգումների մասին:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը որդեգրում է գիտական և հանրային առողջապահական փորձաքննության վրա հիմնված փուլային մոտեցում, որը համընկնում է Կալիֆոռնիայի ճանապարհային քարտեզի հետ՝ թույլատրելու հանրային ցայտադրյուր խաղահրապարակների վերաբացումը:

Զվարճանքի այգիներում տեղակայված ցայտադրյուր խաղահրապարակները պետք է փակ մնան, մինչև թույլատրվի դրանց փոփոխված կամ լիարժեք գործունեությամբ բացումը:

Սույն ուղեցույցում ընդգրկված հանարային ցայտադրյուր խաղահրապարակների բոլոր շահագործողները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցները, ի հավելում՝ Հանրային Լողավազանների Արձանագրության համապատասխան հատվածների, և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու ցանկացած միջոցը կիրառելի չէ:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս փաստաթուղթը կարող է թարմացվել՝ կախված լրացուցիչ ինֆորմացիայի և ռեսուրսների հասանելիությունից, ուստի անպայման կանոնավոր կերպով ստուգեք Լոս Անջելես Շրջանի կայքը՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/>՝ այս փաստաթղթի թարմացումներին հետևելու համար:

Այս ստուգաթերթը ներառում է՝

- (1) Աշխատավայրի քաղաքականությունն ու գործելակերպը ուղղված աշխատակիցների առողջության պապանմանը:
- (2) Ֆիզիկական հեռավորությունն ապահովելու միջոցառումներ
- (3) Վարակի վերահսկումն ապահովելու միջոցառումներ
- (4) Աշխատակիցների և հանրության հետ հաղորդակցություն
- (5) Կարևոր ծառայությունների անաչառ հասանելիության միջոցառումներ

Եթե ձեր հաստատությունը մշակի վերաբացման արձանագրություններ, պետք է անդրադառնալ այս հինգ հիմնական ոլորտներին:

Այս ուղեցույցում ընդգրկված բնակելի հաստատությունների լողավազանների բոլոր շահագործողները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և



պատրաստ լինեն բացատրել, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում չի վերաբերում իրենց բիզնեսին:

Բիզնեսի անուն՝ _____

Հաստատության հասցե՝ _____

Փակցնելու ամսաթիվը՝ _____

A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ (ՆՇԵՔ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

- Յուրաքանչյուր ոք, ով կարող է իր պարտականությունները կատարել տնային պայմաններում, պետք է հանձնարարվի այդպես անել:
- Խոցելի աշխատակիցներին (65 տարեկանից բարձր տարիքի և խրոնիկական հիվանդություններ ունեցող) հանձնարարվում է այնպիսի աշխատանք, որը հնարավոր է կատարել տնից:
- Բոլոր աշխատակիցներին հրահանգվել է հիվանդ ժամանակ չզնայ աշխատանքի և հարկ եղած դեպքում հետևել DPH-ի ինքնամեկուսացման ուղեցույցին:
 - o Ստեղծեք վերապատրաստված փոխարինող աշխատողների ցուցակը:
 - o Աշխատակիցներին տրամադրվում է տեղեկատվություն գործատուի կամ պետության կողմից հովանավորվող բացակայության նպաստների մասին, որոնք աշխատակիցը միզուցե իրավունք ունենա ստանալու, որը ֆինանսապես կհեշտացնի տանը մնալը: Տե՛ս [հիվանդության հիմքով աշխատողին տրամադրվող արձակուրդի և COVID-19-ի համար աշխատողների փոխհատուցման կառավարության աջակցման ծրագրերի](#), ներառյալ աշխատողների կողմից հիվանդության հիմքով արձակուրդ ստանալու իրավունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններն անմիջապես [Հնտանիքների Կորոնավիրուսին Առաջին Արձագանքի Օրենքի](#) ներքո, և աշխատակիցների համար աշխատողների փոխհատուցման վճարներ ստանալու իրավասության և COVID-19-ին առնչվող աշխատանքների մասին տեղեկությունները՝ համաձայն Նահանգապետի [N-62-20 Գործադիր Հրամանի](#):
- Եթե տեղեկանում եք, որ մեկ կամ ավելի աշխատակիցներ COVID-19 դրական են թեստավորվել կամ COVID-19-ին համապատասխան ախտանիշեր ունեն, գործատուն ունի մշակած ծրագիր կամ արձանագրություն՝ այդ անձին(անձանց) մեկուսացնելու տանը և պահանջելու անհապաղ ինքնամեկուսանալ բոլոր աշխատակիցներին, ովքեր աշխատավայրում շփվել են այդ անձի(անձանց) հետ: Գործատուի ծրագրով պետք նախատեսվի արձանագրություն՝ կարանտինում գտնվող բոլոր աշխատակիցների հնարավորություն տալու կամ COVID-19 թեստավորելու վերաբերյալ, որպեսզի պարզվի, թե արդյոք եղել են աշխատավայրում այլ վարակներ, որը կպահանջի COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: Տես՝ Հանրային Առողջապահության ուղեցույցը [Աշխատավայրում COVID-19-ին արձագանքելու վերաբերյալ](#):
- Եթե սեփականատերը, կառավարիչը կամ շահագործողը տեղեկանում է, որ աշխատավայրում 14

օրվա ընթացքում 3 կամ ավելի հաստատված դեպքեր են եղել, գործատուն պետք է Հանրային Առողջապահության Վարչությանը տեղեկացնի այս խմբի մասին՝ զանգահարելով (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարներին: Եթե բռնկումը հայտնաբերվում է աշխատանքային վայրում, ապա Հանրային Առողջապահության Վարչությունը մեկնարկում է բռնկմանն արձագանքելու քայլեր, ինչը ներառում է վարակի դեմ պայքարի ցուցումների և առաջարկների տրամադրում, տեխնիկական աջակցություն և տեղանքին հատուկ վերահսկողության միջոցառումներ: Հանրային առողջապահության կառավարիչը կստանանի բռնկման հետաքննությունը՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:

- [Աշխատակիցների](#) կողմից աշխատավայր մուտք գործելուց առաջ իրականացվում է աշխատակիցների սքրինինգ: Ստուգումը ներառում է հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև պարզաբանում, թե արդյոք աշխատակիցը վերջին 14 օրերի ընթացքում շփում է ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ: Նշված ստուգումներն իրականացվում են հեռակա կամ անձամբ՝ աշխատակցի ժամանման պահին: Աշխատավայրում հնարավորության դեպքում իրականացվում է ջերմաչափում:
 - Բոլոր աշխատակիցներին, որոնք շփում ունեն հանրության կամ այլ աշխատակիցների հետ անվճար առաջարկվում է պատշաճ դիմակ, որը ծածկում է քիթն ու բերանը: Աշխատակիցները պետք է կրեն դիմակները աշխատանքային օրվա ամբողջ ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու կամ շփման հավանականության պարագայում: Այն աշխատակիցները, որոնք բուժաշխատողի կողմից դիմակ չկրելու հրահանգ են ստացել, պետք է կրեն դեմքի վահան, որի ներքևի եզրին կտոր է ամրացված, որպեսզի համապատասխանեն Պետական Հրահանգներին, եթե իրենց վիճակը թույլ է տալիս: Ցանկալի է, որ կտորը տեղավորվի կզակի տակ: Չի կարելի օգտագործել միակողմանի փականներով դիմակներ: Պարտադիր չէ կրել դիմակ, եթե աշխատակիցը գտնվում է միայնակ առանձին աշխատասենյակում կամ անհատական աշխատանքային տարածքում, որտեղ կա կանգնած դիրքում աշխատակցի հասակը գերազանցող ամուր միջնորմ:
 - Աշխատակիցներին հանձնարարվում է ամեն օր լվանալ կամ փոխարինել իրենց դիմակները:
 - Աշխատողները կարող են դիմակներ չկրել ջրում գտնվելիս:
 - Ընդմիջումների ժամերը տատանվում են, որպեսզի ընդմիջման սենյակներում աշխատակիցների միջև ամբողջ ընթացքում հնարավոր լինի պահպանել վեց (6) ոտնաչափ հեռավորություն:
 - Աշխատակիցներին արգելվում է ուտել կամ խմել աշխատավայրում ցանկացած տեղ՝ բացի նախատեսված ընդմիջման սենյակներից, որպեսզի համոզվեք, որ դիմակները հետևողական և ճիշտ են կիրառվում:
- Ախտահանիչները և հարակից նյութերը տրամադրված են աշխատակիցներին հաստատության հետևյալ վայր(եր) ում:
 - COVID19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանիչ սարքը հասանելի է բոլոր աշխատողներին հաստատության հետևյալ վայր(եր) ում:
 - Աշխատակիցներին թույլատրվում է հաճախակի ընդմիջումներ՝ ձեռքերը լվանալու համար:
 - Այս արձանագրության պատճեն տրվել է յուրաքանչյուր աշխատակցին:
 - Ընտրողական — Նկարագրեք այլ միջոցառումներ:

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Մահմանափակեք ցայտադրյուր խաղահրապարակի օգտագործումը՝ ապահովելու, որ օգտվողները կարողանան 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահել այն անձանցից, ովքեր իրենց տնային տնտեսության անդամները չեն: Ցայտադրյուր խաղահրապարակի 36 ոտնաչափ տարածությանը 1 այցելու հարաբերության կիրառումը կօգնի որոշելու թյուլատրելի այցելուների քանակը:
 - Նշեք ցայտադրյուր խաղահրապարակի ներկա չափսը՝ քառակուսի ոտնաչափերով. _____
Նշեք թյուլատրելի այցելուների քանակը, կիրառելով՝ 36 քառակուսի ոտնաչափին 1 այցելու հարաբերությունը. _____
 - Ցանկալի է կիրառել ցայտադրյուր խաղահրապարակից օգտվելու ամրագրումներ:
- Նշանակեք աշխատակից(ներ), ով պատասխանատու կլինի վերահսկելու և ապահովելու, որ ցայտադրյուր խաղահրապարակից օգտվողների թիվը չի գերազանցում վերոնշյալ պայմաններին: Նշանակված անձը պատասխանատու է նաև, որ այս ուղեցույցները պահպանվեն ամեն օր: Նշանները նույնպես պետք է ցուցումներ տան ծնողներին՝ օժանդակելու, որ երեխաները պահպանեն ֆիզիկական հեռավորության և դեմքի ծածկոցներ կրելու պահանջները՝ 3 տարեկան և ավելի մեծ երեխաների դեպքում, երբ նրանք ջրում չեն:
- Գծանշումներով կամ այլ եղանակով շարքեր ստեղծեք՝ օգնելու պահպանել ֆիզիկական հեռավորությունը, մինչ այցելուները սպասում են ցայտադրյուր խաղահրապարակ մտնելուն:
- Մահմանեք ցայտադրյուր խաղահրապարակի շահագործման ժամեր, որպեսզի հնարավոր լինի պատշաճ կերպով վերահսկել:
- Հարկավոր է պատնեշներ կիրառել ցայտադրյուր խաղահրապարակի տարածքը փակելու համար՝ մուտքն ու ելքը վերահսկելու նպատակով:
- Ցայտադրյուր խաղահրապարակի տարածքի նստարանները հարկավոր է հեռացնել կամ փակել՝ թույլ չտալու մարդկանց հավաքվելը:
- Իրականացվում են միջոցառումներ՝ ապահովելու սոցիալական հեռավորության (անհատները կարող են առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահպանել այն մարդկանցից, ում հետ չեն ապրում) պահպանումը:
- Հանդերձարանները և գուգարանները վերահսկվում են՝ ապահովելու, որ ներսում միաժամանակ գտնվող մարդկանց թիվը թույլ է տալիս պահանջվող ֆիզիկական հեռավորության պահպանումը:
- Արգելեք խնջույքներն ու հավաքույթները բոլոր ընդհանուր տարածքներում, ներառյալ՝ ցայտադրյուր խաղահրապարակում, բացառությամբ՝ նույն տնային տնտեսության անդամների:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Խորհրդակցեք ջրային հաստատությունը նախագծած ինժեների կամ ընկերության հետ, որոշելու, թե [EPA-ի կողմից ընդունված աշխատհանիչների ցանկից](#) որն է ամենահարմարը ջրային հաստատության համար:
- Քլորի մակարդակը պետք է փորձարկվի ամեն ժամ, իսկ PH- ի մակարդակը պետք է փորձարկվի օրը երկու անգամ կամ ավելի հաճախ, ըստ՝ անհրաժեշտության: Ջրի քիմիական բաղադրությունը պետք է գերազանցի նվազագույն առաջարկությունները:
- Այն հաստատությունների համար, որոնք չեն շահագործվել, վերաբացելուց առաջ հինգ րոպե բաց թողեք տաք և սառը ջրի փականները՝ հաստատության ջրամատակարարման համակարգում հավաքված հին ջուրը նոր և անվտանգ ջրով փոխարինելու նպատակով:
- Հաճախակի հպման մակերեսների և ընդհանուր օգտագործման իրերի համար կիրառեք մաքրման և ախտահանման ծրագիր՝ ամեն անգամ, երբ դրանք օգտագործվում են: Օգտագործեք EPA-ի կողմից հաստատված ախտահանիչներ: Հետևյալ պարագաները և տարածքները

հաճախակի մաքրվելու և ախտահանվելու են՝ հետևյալ ժամանակացույցով.

- Դռների բռնակները և զուգարանների մակերևույթները, ձեռքերը լվանալու կայանները, տակդիրները փոխելու կայանները և ցնցուղները _____
- Ընդհանուր օգտագործման տարածքներ (օր.՝ պահոցները) _____
- Զուգարաններ և ցնցուղներ _____
- Այլ _____

Ըստ անհրաժեշտության, փակեք տարածքները՝ մաքրելու և ախտահանելու համար:

- Հեռացրեք աղբը կամ մաքրեք տարածքները: Ստուգեք և զեկուցեք բոլոր հնարավոր վտանգների մասին:
- Ապահովեք, որ ջրահեռացման բոլոր համակարգերը գերծ լինեն աղբից, քարերից, ապակիներից և այլ օտար իրերից:

Հաստատություն ժամանող այցելուներին հիշեցվում է, որ նրանք հաստատությունում կամ հաստատության տարածքներում գտնվելու ողջ ընթացքում (բացառությամբ ուտելիս կամ խմելիս, եթե կիրառելի է) պետք է կրեն դիմակներ: Մա վերաբերվում է բոլոր մեծահասակներին և 2 տարեկանից բարձր երեխաներին: Այս պահանջից ազատվում են միայն այն անձինք, որոնք բուժաշխատողի կողմից դիմակ չկրելու հրահանգ են ստացել: Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությունն ապահովելու համար՝ պետք է ունենալ դիմակներ այն այցելուների համար, որոնք ժամանում են առանց դիմակների:

Ջրում գտնվելիս կարիք չկա դիմակ կրել:

Ախտանիշների ստուգումն իրականացվում է նախքան այցելուների մուտքը ցայտաղբյուր խաղահրապարակ: Ստուգումը ներառում է հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողի ստուգում: Նշված ստուգումներն իրականացվում են անձամբ կամ այլընտրանքային մեթոդների միջոցով, օրինակ՝ առցանց գրանցման համակարգերի կամ հաստատության մուտքի մոտ տեղադրված ցուցանակների միջոցով, որտեղ ասվում է, որ նման ախտանիշներ ունեցող այցելուները չպետք է մտնեն տարածք:

Տրամադրեք բավարար քանակով պարագաներ՝ առողջ հիգիենա ապահովելու համար: Այդ պարագաները ներառում են՝ օձառ, առնվազն 60% սպիրտային հիմքով ձեռքի ախտահանիչ միջոց, թղթե սրբիչներ, անձեռոցիկներ և աղբամաններ, որոնցից բնակիչները կարող են օգտվել:

Խմելու ջրի ցայտաղբյուրները ծածկված են, որպեսզի չօգտագործվեն:

Մարդիկ պետք է բերեն իրենց անձնական սնունդն ու ըմպելիքը, որոնք չի կարելի ընտանեկան տնտեսությունից դուրս ուրիշների հետ ընդհանուր օգտագործել:

Հաճախակի հմպան մակերեսները, որոնք կարող են կիրառվել երեխաների կողմից, օրինակ՝ ջրային ատրճանակները հարկավոր է անջատել, ծածկել կամ հեռացնել:

Ցայտաղբյուր խաղահրապարակի ներսում կամ դրա շուրջ չի թույլատրվում անձնական ջրային խաղալիքներ:

Ցայտաղբյուր խաղահրապարակ բերված իրերը չի կարելի ընտանեկան տնտեսությունից դուրս ուրիշների հետ ընդհանուր օգտագործել:

- Մարդկանց խորհուրդ է տրվում ցայտադրյուր խաղահրապարակ բերել իրենց անձնական սրբիչները և չի կարելի համատեղ օգտագործել սրբիչները իրենց տնային տնտեսության անդամ չհանդիսացող մարդկանց հետ:

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Այս արձանագրության պատճեն փակցված է ցայտադրյուր խաղահրապարակ հաստատության բոլոր հանրային մուտքերի մոտ:
- Ցայտադրյուր խաղահրապարակի բոլոր հանրային մուտքերի մոտ նշաններ են փակցված՝ տեղեկացնելու օգտվողներին.
 - Տանը մնալ, եթե հիվանդ են, կամ COVID-19-ի հետ համընկնող ախտանիշեր ունեն:
 - Հնարավորինս 6 ոտնաչափ սոցիալական հեռավորություն պահպանել ընտանիքի անդամ չհանդիսացող մարդկանցից և ցայտադրյուր խաղահրապարակում չներգրավվել որևէ ոչ անհրաժեշտ ֆիզիկական շփման մեջ: Ծնողները պետք է օգնեն իրենց երեխաներին այս առաջարկությունները կատարելու հարցում:
 - Ցայտադրյուր խաղահրապարակ մտնելուց առաջ լվացեք ձեր ձեռքերը կամ ձեռքերի ախտահանման միջոց օգտագործեք:
 - Դեմքի ծածկոց կրեք, երբ տեղաշարժվում եք հաստատության ընդհանուր տարածքներում, ներառյալ՝ դեպի ցայտադրյուր խաղահրապարակ և այնտեղից վերադառնալիս, ինչպես նաև ընդհանուր զուգարաններում: Հիշեցրեք երեխաներին հեռացնել դեմքի ծածկոցը ցայտադրյուր խաղահրապարակ մտնելուց:

E. ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԱՉԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Առաջնահերթություն է տրվել հաճախորդների/գնորդների համար կարևոր ծառայություններին:
- Միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի շարժման սահմանափակումներ ունեցող և/կամ հանրային վայրերում բարձր ռիսկի տակ գտնվող բնակիչների համար ապահովվի ապրանքների և ծառայությունների հասանելիությունը:

Սոցիալական հեռավորության և հաստատությունների/մակերեսների ախտահանման ընթացակարգերի վերաբերյալ ցուցումներ կարող եք ձեռք բերել նաև Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններից՝ հետևյալ հղումով <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/php/water.html>: